

60,000 Լ. ՈՍԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Ինչպէս գրեցինք, Վեհ, Գարեգին Կաթողիկոսի նախանձեռնութեամբ, Սուրիա-Լիբանանի Հայերը կազմած են Կեդր. Յանձնաժողով մը, Հայաստանի ի նպաստ հանգանակութեանց ձեռնարկելու համար: Մտադրութիւն կայ, ի միջի այլոց, Հայաստանի մէջ կօշիկի գործարան մը հաստատելու, Սուրիա-Լիբանանի հայոց ծախսերով:

Այժմ Պէյրութէն կը տեղեկանանք թէ Վեհափառը Անթիլիասի մէջ Կեդր. Յանձնաժողովի նիստի մը ընթացքին, ուր հրաւիրուած էին բազմաթիւ ունեւոր ազգայիններ այ, ազդու հառով մը բացուած հոչակած է հաճախակութիւնը: Տեղւոյն վրայ, կարն ժամանակի մէջ, հանգանակուած է 31,000 լ. ոսկի: Յաջորդօրն իսկ, նոր մասնակցութիւններով, այդ գումարը հասած է 60,000 ոսկիի: Ասիկա՝ միայն. Պէյրութի մէջ եւ քանի մը անձերու միջեւ: Եթէ նոյն քափով շարունակուի հանգանակութիւնը՝ Սուրիա-Լիբանանի Հայութիւնը պիտի կարենայ օրինակելի հանդիսանալ:

— Նոյն օրը, մինչ ժողովականները Վեհարան հաւաքուած էին, տեղի ունեցած է սրտառուչ դէպք մը: Յնցոսիներ հազած ծերունի մը ուզած է ներկայանալ Վեհափառին, բայց բարապանները արգելի հանդիսացած են: Վեհափառը տեղեկանալով՝ թոյլատրած է որ ծերունին գայ իրեն մօտ: Եւ այս վերջինը յայտարարած է թէ շատ համեստ նիւթական պայմաններու մէջ գտնուելով եւ սակայն ուզելով իր լուսման ընծայաբերել Հայաստանի օգնութեան գործին, երեք տարի ինքզինքը զրկած է նոր հագուստէ, մնացած է նոյն զգեստով եւ այդ կերպով կրցած է խնայել գումար մը (մօտ 100 լ. ոսկի՝ եթէ չենք սխալիր), զոր կը յանձնէր Վեհափառին, Հայրենիք դիմելու համար...

Գարեգին Վեհը յուզումէն փղձկած է եւ ողջագուրած վեհանձն ծերունին: Ի՞նչո՞ր ներկաները խորապէս զգածուած են այս ծեսքէն եւ այս տեսարանէն:

Իսկ մը ասիկա՝ Հայաստանի համար կօշիկի ֆոնսին իրենց աւելորդէն իսկ ժլատութեամբ տուող մեր ունեւորներուն: